միակերպ մի երգ, կարծես իրանց կառքը քաշող բազմամբոխ լուծը քաջալերելու համար:

Դժւար տեղերում կամ կառքը անկիւնից ծռելիս նրանց օգնութեամբ էին վեր ցատկում ուրիշ երկու հոգի էլ, նոյնպէս հովհարներով զինւած, եւ չորսը միասին աւելի եռանդուն կերպով շարժում էին իրանց իրաններն ու հովհարները, ու խումբն էլ ցածում աւելի եռանդուն կերպով ճգում էր իր պարանը:

Առաջին կառքին հետեւեցին բազմաթիւ զարդարուն պատգարակներ զանազան այլաբանական իրերով ու սրբութիւններով. մէկի մէջ մի փոքրիկ տնակ ու մի գեղջկուհու խրտւիլակ, միւսի մէջ մի ինչ որ աստւած, եւ այսպէս անընդհատ: Ետեւից գալիս էր մի նաւ անիւների վրա դրւած, մէջը նորից երաժիշտներ, այնուհետեւ մի խումբ նաւաստիներ նաւապետի առաջնորդութեամբ:

Սրանով էլ վերջացաւ թափօրը, որը՝ որչափ հասկանալ կարողացայ, ամառւայ ու պտղաբերութեան յաղթանակն էր ուզում ներկայացնել: